ԱՐՄԵՆ ՕՍԻՊՅԱՆ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԸ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(գիտական հաղորդում)

Գեղագիտականի և բարոյականի փոխկապակցվածությունը ի հայտ է եկել վաղ ժամանակներից: Ինչպես նշում է Վ. Վանսլովը «ճշմարտությունը, բարին, գեղեցկությունը դեռ վաղուց ի վեր հանդես էին գալիս գեղագիտության ասպարեզում իբրև հարազատ քույրեր»[1]": Դրսևորվելով կյանքի բոլոր բնագավառներում՝ նրանց միասնությունը օրինաչափորեն գտավ իր անդրադարձը տարբեր ժողովուրդների հասարակական գիտակցության մեջ, ինչի վառ ապացույցն է մասնավորապես նրանց առածանիները: Սակայն դրա բարձրագույն և իմաստավորված արտահայտությունը մենք գտնում ենք գեղագիտական մտքի մեջ:

Իր հիմքում ունենալով աշխարհի ուսումնասիրումը գեղեցիկի և նրա ածանցյալների տեսանկյունից՝ գեղագիտությունը բնորոշում է մարդու և ազգության հոգևոր աշխարհը և դրանից բխող համապատասխան վարքը: Այս առումով մեծ դեր են կատարում գեղագիտական կատեգորիաները՝ գեղեցիկը, վեհը, ողբերգականը, կատակերգականը, դրամատիկականը, որոնք պայմանավորում են գեղագիտական և բարոյագիտական գիտակցության ընդհանրությունը մեկ ազգության շրջանակներում: Եվ, իրոք, դժվար է պատկերացնել բարոյական նորմերի և սկզբունքների գործածությունը առանց հստակ գեղագիտական համակարգի, նրա կատեգորիաների անմիջական միջամտության: Չէ՞ որ չարն ու բարին, խիղճն ու պարտքի զգացողությունը չի կարելի անջատ դիտել գեղեցիկից և վեհից, տգեղից, նսեմից, և վերջապես ցանկացած բարոյագիտական երևույթում կարելի է տեսնել ողբերգական, կատակերգական և դրամատիկական երանգներ: Հենց այստեղ է, որ բարոյագիտությունը և գեղագիտությունը ներառում են միմյանց մեջ մշակույթի ֆենոմենի շրջանակներում: Ծնունդ առնելով հենց առօրյա կյանքում և կենցաղում՝ սույն անբաժանելի կապը այնուամենայնիվ առավելագույնս մատչելի և ցայտուն տեսքով է հանդես գալիս մշակույթի բնագավառում: Ցանկացած ազգային, այդ թվում նաև հայ մշակույթը իր առանձին ոլորտներում, լինի դա արվեստ, բարոյագիտություն կամ այլ ասպարեզ, միշտ կրել է և շարունակում է կրել իր մեջ գեղագիտական

մտածողության շերտերը՝ արտահայտված գեղագիտական կատեգորիաներում: Ցանկացած ժողովրդի մոտ բարոյական հատկանիշները անբաժան մասն են կազմում նրա գեղագիտական հայացքների, այսինքն՝ դիտվում են գեղեցիկի և տգեղի, վեհի, հերոսականի և նսեմի անքակտելի կապի մեջ: Այս առումով բացառություն չէ նաև հայ ժողովուրդը: Այլ ազգերի նման, իր պաշտամունքի առարկան դարձրած բարությունն ու արդարությունը, հոգու վեհությամբ և անձնվիրությամբ կարելի է հաղթահարել չարիքն ու չարամտությունը:

Բազմազան և բազմապիսի են բարոյականի և գեղագիտականի կապի դրսևորումները հայոց ընդհանուր մտածելակերպի ասպարեզում: Վերջիններս կարելի է բացահայտել ինչպես առօրեական կյանքում, այնպես էլ դիցաբանական ոլորտում, միջնադարյան և արդի հայկական գեղարվեստական ստեղծագործություններում, ինչպես նաև հին ու նոր ժամանակների մեր հանրաճանաչ տեսաբանների աշխատություններում:

Առօրյա մարդկային հարաբերություններում բարի և ազնիվ արարքներն անվանվում են վեհ և գեղեցիկ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հայ ժողովուրդը, առակայական գեղեցկությունը տարածում է բարոյական, զուտ հոգևոր ասպարեզում: Պատահական չէ ամենևին, որ իրականության այս կամ այլ կողմերի գնահատականներում հնչում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են. «սիրուն չստացվեց», «գեղեցիկ չվարվեց», ինչը նշանակում է, որ ժողովրդի մոտ ցածր ու անբարոյական երևույթը զուրկ է իր գեղագիտական արժեքից, այսինքն՝ հեռու է «սիրուն» կամ «գեղեցիկ» լինելուց:

Ազգային ծեսերում, որի ամենավառ օրինակն է մեզ հետաքրքրող տեսանկյունից հարսանեկան ծիսակատարությունը, նորապսակների համեստությունն ու անարատ լինելը համարվում են մեծագույն գեղեցկության վկայություն, ինչը մշտապես գովերգել է ժողովրդական երգի և բանահյուսության ասպարեզներում: Ի դեպ, ազգային բանահյուսական նմուշները, որոնք հիմք են հանդիսանում մեր հարստագույն դիցաբանական արվեստի, նույնպես բավականին ցայտուն են դրսևորում բարոյականը և գեղագիտականի կապը հայկական գիտակցության մեջ: Խոսքը վերաբերում է «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Հայկ և Բել» առասպելներին, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» էպոսին: Արա Գեղեցիկը, որի անունն իսկ արտահայտում է մեր ժողովրդի բարձր գեղագիտական գնահատականը՝ տրված սույն հերոսին, ազնիվ է, առաքինի, անմնացորդ նվիրված իր

հայրենիքին, որին չի կարելի գայթակղել ոչ կնոջ սիրով, ոչ էլ վախեցնել մահով: Արտաքնապես ամրակազմ և բարետես՝ նա հիրավի իր մեջ է դրսևորում գեղագիտական (գեղեցկություն, վեհություն, հերոսականություն) և բարոյական (ազնվություն, նվիրվածություն) բարձր հատկանիշներ: Նույնը կարելի է ասել նրա նախահոր՝ Հայկ նահապետի մասին, որն աչքի ընկնելով համակրելի արտաքինով, նույնպես չի վարանում վտանգի առջև, նվիրված է հարազատ ժողովրդին և ազնիվ է վարվում անգամ թշնամու՝ Բելի հետ, որին նա մտադիր է հաղթել և հաղթում է միայն ազնիվ պայքարում: Այսպիսով վերոհիշյալ երկու հայ դիցաբանական հերոսները գեղագիտականի և բարոյականի անբաժանելի կապի վառ օրինակներ են:

«Սասունցի Դավիթ» էպոսը հսկայածավալ ժողովրդական ստեղծագործություն է, որից կարելի է քաղել ստույգ և հարուստ տեղեկություններ հայ ազգի կենցաղի, էթիկայի և իդեալների մասին: Այստեղ բավականին ծավալուն են պատկերված ժողովրդական ծեսերն ու սովորույթները, որոնք թույլ են տալիս ճիշտ պատկերացում կազմել հայերի կենցաղային և բարոյա-գեղագիտական արժեքների մասին[2]: Էպոսում զգալի տեղ են զբաղեցնում բազմազան ժողովրդական խաղերն ու յուրահատուկ ծիսական մրցումները: Երիտասարդ տղամարդիկ ցուցադրում են իրենց ճարպկությունն ու հմտությունը ձիավարժության, ըմբշամարտի ասպարեզում: Այդ ամենը ուղեկցվում է համապատասխան երաժշտությամբ և պարերով: Այսպիսով՝ ստեղծվում է վեհ ռիթմի, հպարտ հնչող մեղեդիների ամբողջությունը, (տվյալ դեպքում խոսքն, իհարկե, վերաբերում է էպոսի ժողովրդական բեմականացմանը):

Վերոհիշյալ ծիսակատարությունները հագեցած են նաև ազնիվ պայքարի, հարազատ հողին անմնացորդ նվիրվելու գաղափարով: Այս օրինակների հիման վրա դժվար չէ ընկալել գեղեցիկի, վեհի և բարձր բարոյական հատկանիշների պատկերի միասնական բնույթը հայ ժողովրդի գիտակցության մեջ: Հատկանշական է նաև գույների և երանգների միտումնավոր հակադրությունը էպոսում: Սպիտակն ու լուսավորը այստեղ խորհրդանշում են գեղեցիկը, բարին և նույնիսկ պարզամտությունը՝ բառիս դրական իմաստով (ճերմակամորուս ծերունի, ճերմակ աստղեր, Դավթի դեմքը համեմատվում էր լուսավոր արեգակի հետ): Եվ, ընդհակառակը, սև և մուգ գույները տգեղության, նսեմության և նենգության խորհուրդ են պարունակում (Մսրա Մելիքի և Իսմիլ խաթունի դեմքերը թուխ են, աչքերը՝ սև և վտանգով ու խորամանկությամբ լեցուն): Վերջապես, ինքը՝ գլխավոր հերոս Սասունցի Դավիթը, լիովին մարմնավորում է մեր ժողովրդի պատկերացումը գեղեցիկի

և բարու մասին: Նա գեղեցկադեմ է, թիկնեղ և շիկահեր, աչքերն արտացոլում են արևի ճառագայթներ: Դրա հետ մեկտեղ Դավիթը գերազնիվ է, մեծահոգի և նույնիսկ մի փոքր միամիտ: Ժողովրդի համակրանքն է շոյում այն փաստը, որ սույն հերոսը թշնամանք չի տածում հասարակ արաբների նկատմամբ, պատրաստ է օգնության գալ բոլորին և շիտակ ու ազնիվ է նույնիսկ մեր երկրի ոխերիմ թշնամու՝ Մսրա Մելիքի նկատմամբ՝ անգամ վտանգելով սեփական կյանքը: Անվիճելի է, որ հայ ժողովրդի գիտակցության մեջ պարզորոշ կերպով արտահայտվում է բարձր գեղագիտական և բարոյական հատկանիշներով օժտված հերոս ունենալու անսահման ցանկությունը:

Վաղ միջնադարյան և հետագայում վերածննդյան Հայաստանում գեղեցիկի էությունն է իմաստը նույնպես օրգանական կապի մեջ են բարու և չարի հասկացությունների հետ: Այսպիսով՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ում խոսվում է գեղեցիկ երկրի գեղեցիկ կարգերի և մարդկանց բազմաշերտ փոխհարաբերությունների մասին[3]: Պարզ է, որ մեր մեծ պատմիչի համար այն, ինչ գեղեցիկ է, միևնույն ժամանակ նաև խիստ բարոյական է: Բարձրագույն գեղեցկությունը Խորենացու համար առաջին հերթին բարոյական գեղեցկություն է: Այդ գաղափարին մոտ են կանգնած Եղիշեն և Եզնիկ Կողբացին, որոնց համար մարդու գեղեցկությունը պայմանավորված է ազնիվ արարքներով և բարու անհուն զգացումով: Ավելի հեռու է գնում իր բարոյական գեղագիտական հայացքներում մեծն Դավիթ Անհաղթը, որը միանշանակորեն պնդում է գեղեցիկի և բարու առաջնայնությունը նույնիսկ ճշմարտության նկատմամբ[4]:

Հայոց վերածննդի ժամանակաշրջանում այս ոլորտը ուսումնասիրման նոր թափ է ստանում: Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Կոստանդին Երզնկացին և այլք դիտում էին գեղեցիկն ու վեհը, բարին ու պարկեշտությունը՝ որպես հասարակական կյանքի իդեալ: Իրենց համար գեղեցիկն ու բարին, վեհն ու ազնվությունը հոմանիշներ են, որոնց հնարավոր չէ արհեստականորեն բաժանել միմյանցից: Կարելի է վստահորեն նշել, որ Վերածննդի հայ գեղագիտական մտքի առանցքն է կազմում գեղեցիկի ու բարու, գեղագիտականի և բարոյականի անքակտելի միասնության գաղափարը: Գրիգոր Նարեկացին՝ Հայոց Վերածննդի ռահվիրան, իր «Մատյան ողբերգության» մեջ երևան է հանում մեծագույն հոգեկան տառապանք՝ կապված ճշմարիտ բարոյականի հաղթանակի հետ: Ըստ հեղինակի՝ քանի որ մարդ արարածին ի վերուստ տրվում է կյանքի գեղեցկության գնահատականը, ուստի այն չպետք է հակադրվի եկեղեցական բարոյականությանը, այլ

ընդհակառակը, պետք է ներդաշնակորեն գոյատևի վերջինիս հետ: Գովերգելով հոգու ներդաշնակությունը և ձգտելով նրան՝ Նարեկացին, ամենայն հավանականությամբ, հենց դրանում է դիտում գեղագիտականի և բարոյականի կապը: Վերածննդի նշանավոր դեմքերից Նահապետ Քուչակը՝ իր սիրային քնարում արժևորում է գեղեցիկ մարդկանց, մասնավորապես՝ կանանց, փառաբանում է սերը՝ որպես Աստծո գերագույն շնորհ: Սակայն մեծ բանաստեղծի տողերից պարզորոշ երևում է, որ գեղեցիկը թերի է առանց բարոյական հիմքի և ճշմարտացիորեն գեղեցիկ մարդը առաջին հերթին աչքի է ընկնում իր համեստությամբ և հոգու խաղաղությամբ:

Այս կապակցությամբ դիտարժան են նաև Կոստանդին Երզնկացու սիրային բանաստեղծությունները, ուր կարմիր թելով անցնում է հեղինակի անժխտելի միտքն այն մասին, որ աշխարհի ամենագեղեցիկ երևույթը՝ սերը, պարտադիր պետք է լինի մաքուր և ամբասիր: Այլ կերպ ասած՝ հեղինակը հստակ բարոյական պահանջ է դնում կյանքի գեղեցիկ կողմերից մեկի՝ սիրո առջև:

Նոր ժամանակներում հայ հասարակական միտքը նույնպես չի շրջանցում գեղագիտականի և բարոյականի համընդհանուր արմատների խնդիրը: Այսպիսով՝ Առաքել Դավրիժեցին իր «Պատմություն» ծավալուն աշխատության մեջ ստորադասում է կյանքի գեղեցիկ լինելը մարդկանց ազնիվ և բարոյական վերաբերմունքին[5]: Հետաքրքրական է այս առումով նաև Մխիթար Սեբաստացու դիրքորոշումը սույն հարցի վերաբերյալ: Ըստ նրա՝ գեղեցիկը բացի իր բուն գեղագիտական սահմանումից իր մեջ է ներառում նաև պատվի և արժանապատվության հասկացությունները, այլ կերպ ասած, արժանապատիվ և ազնիվ արարքներն արդեն իսկ գեղեցիկ են: Այդ մասին մենք լիովին տեղեկանում ենք մեր նշանավոր հասարակական գործչի «Հայկազյա բառարան»-ից, ուր գեղեցիկի բնորոշումը տրվում է վերոհիշյալ տեսանկյունից[6]:

20-րդ դարի հայկական դրաման նույնպես լեցուն է գեղեցիկի և բարոյականի փոխհարաբերություններով: Այստեղ էլ գեղեցիկը դիտվում է ուղղակի կախվածության մեջ բարոյական չափանիշներից՝ ազնվությունից, անկեղծությունից, ուղղամտությունից և, հակառակը, վերջիններս, իրենց հերթին պայմանավորված են գեղագիտական գնահատականներով: Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի հերոսուհին՝ Մարգարիտը, պատվախնդիր է, գերազնիվ և միևնույն ժամանակ արտաքնապես գեղեցիկ: Իսկ Սունդուկյանի բացասական կերպարները, ինչպիսիք են Զամբախովը «Խաթաբալայից», Զիմզիմովն ու Եփեմիան «Պեպո»-ից, աչքի են ընկնում

տգեղ, նույնիսկ կատակերգականորեն անճոռնի արտաքինով, որը նրանց նսեմ հոգու, անազնվության և խաբեբա բնավորության արտացոլումն է: Գեղագիտականի և բարոյականի ընդհանրության տեսանկյունից արժեքավոր է Լ. Շանթի «Հին աստվածներ» պիեսը: Հին ու նորի, հեթանոսության և քրիստոնեության անզիջում պայքարը ալեկոծում է գլխավոր հերոսների՝ Վանահոր և Աբեղայի սրտերն ու հոգիները, պահանջում նրանցից միանշանակ կողմնորոշում կա՛մ դեպի կենսասիրություն, պաշտամունք աշխարհիկ արժեքների նկատմամբ, կա՛մ անխոս նվիրվածություն քրիստոնեական աստծուն և եկեղեցուն: Այս առումով միջանկյալ դիրքորոշում է զբաղեցնում Իշխանուհին, որը հայտարարում է, որ Աստված առաջին հերթին սեր է և մեծագույն մեղք է կյանքի գեղեցիկ կողմերից հրաժարվելը: Այլ կերպ ասած՝ Շանթն իր հանրաճանաչ դրամայի միջոցով առաջ է քաշում այն գաղափարը, որի համաձայն անբարոյական է և անազնիվ սեփական անձի նկատմամբ գիտակցորեն ճնշել ձգտումը դեպի գեղեցիկը, դեպի կյանքի հաճելի կողմերը: Միմիայն ճշմարիտ սերն է, որ ընդունակ է իր մեջ միաձուլել գեղեցիկն ու բարոյականը և որի շրջանակներում մարդկային հարաբերությունների վերոհիշյալ ածանցյալները չեն կարող հակասության մեջ գտնվել իրար նկատմամբ, այլ ընդհակառակը, կոչված են համալրելու միմյանց:

Անցած դարի հայրենասիրական քնարը՝ ի դեմս Պարույր Սևակի, Շիրազի և Սիլվա Կապուտիկյանի, գովերգում է անսահման գեղեցիկն ու խիստ բարոյականը: Մեր հայտնի բանաստեղծները քարոզելով այնպիսի բարձր հոգևոր արժեքներ, ինչպիսիք են անձնուրացությունն ու անմնացորդ, նվիրվածությունը հարազատ ազգին, մատուցում են դրանք համապատասխան գեղագիտական միջոցներով՝ գեղեցիկ երաժշտական խոսքով, հպարտ, վեհ հնչեղությամբ:

20-րդ դարի վերջը գեղարվեստական ստեղծագործությունների հետ միասին հարուստ է նաև տեսական, հետազոտական աշխատանքներով բարոյագիտության և գեղագիտության փոխհարաբերության վերաբերյալ: Մեր ժամանակակիցներից գեղեցիկի, բարու և ճշմարտության անմիջական կապի մասին են խոսում Հ. Ապրեսյանը («Գեղեցիկը և բարին») և Ա. Քալանթարը («Ճշմարտության գեղեցկություն»): Վերոհիշյալ մտածողների համար գեղեցիկը գոյանում և զարգանում է բարոյականի և ճշմարտության խիստ ուրվագծված սահմաններում, և ցանկացած շեղում այդ ուղուց արժեզրկում, իսկ հետագայում նաև ոչնչացնում է գեղեցիկը որպես երևույթ:

Այսպիսով, լինելով տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկան (խոսքը վերաբերում է գեղագիտությանը և բարոյագիտությանը), գեղեցիկն ու բարին, վեհը, հերոսականը, հիմնականում հանդես են գալիս միասնական ճակատով, իսկ նրանց՝ անջատումը միմյանցից ունի պայմանական բնույթ: Սակայն հայտնի են արվեստի տեսակներ, մասնավորապես, կերպարվեստն ու երաժշտությունը, ուր վերոհիշյալ անջատումը պարզապես մնում է երևակայությունից դուրս և ցանկացած արհեստական միջամտություն՝ ուղղված դեպի գեղագիտականի անջատումը բարոյականից, դատապարտված է ստեղծագործական կործանման: Մարտիրոս Սարյանի, Մ. Ավետիսյանի կտավների ջերմ գույները, միաժամանակ ուղղակի ընկալումով արթնացնում են և գեղեցիկի, և հայրենի հողի առաջ բարոյական պարտքի միասնական զգացում: Նույն չափ էլ Կոմիտասի, Ա. Խաչատրյանի երաժշտական գոհարները նպաստում են բարու, վեհի և գեղեցիկի արթնացմանը ցանկացած մարդու հոգում:

Այսպիսին է հակիրճ ներկայացված գեղագիտականի և բարոյականի անբաժանելի կապը, որն առկա է հայ իրականության և արվեստի տարբեր բնագավառներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. В. Ванслов. Проблемы прекрасного. М. Изд. Полит. лит. 1957, с. 145
2. Г. Апресян. "Из истории армянской эстетической мысли". Книга 1, Е. "Айастан" 1973, с. 174
3. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», Ե. «Հայաստան», 1971, էջ. 64
4. Г. Апресян "Красота и добро", М. Изд. МГУ, 1966, с. 27
5. Ա. Դավրիժեցի «Պատմություն», Ե., «Հայաստան», 1985, էջ 36
6. Г. Апресян "Из истории армянской эстетической мысли", книга 1, Е. "Айастан", 1973, с. 265